ԽՈՐԵԶՄԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐԻ
(ՔԻՏԱԲ ՍՈՒՐԱՏ ԱԼ-ԱՐԴ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կիրկիսիա - Կամ Կարկիսիա: Տե՛ս Բայադուրի, ծնթգր. 43:

[2] Հանձիթ (Հանդիթ) - Գավառ Զորրորդ Հայքում: Խեթական արձանագրություններում Anzitu երկիրն է, որի ժողովուրդը Alzi, կամ Anzi էր կոչվում: Հայասայի և Իսուվայի թագավորությունների հետ այդ թագավորությունը ներկայանում է որպես պատմական Հայաստանի տարածքում ծանոթ ամենահին պետություններից մեկը (1400-1200 մ. թ. ա.): Մենուայի արձանագրության մեջ՝ Al-zi-nini: Այդ անվան իրանական ձևն է Արդունեն, իսկ հայկականը՝ Ադձնիք: Պտղոմեոսի մոտ՝ Անդիտինի, ասորական դրությունների մեջ՝ Հանաձեթ: Փավստոսի և Խորենացու մոտ Անձիտ և այլն: (Հակոբ Նալբանդյան, Արարական աղբյուրներ, էջ 210):

[3] Մոսուլ երկիրը – Հավանաբար նկատի ունի Վերին Միջագետքը (Ջազիրա): Տե՛ս նաև Մոսուլ, Բայադուրի, ծնթգր. 63:

[4] Ասիա երկիրը – Տվյալ դեպքում «Ասիա» բառը օգտագործված է որպես Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող երկրամասի, կամ նահանգի անվանում:

[5] Գաղատիա (Ղալաթիա) - Երկրամաս և նահանգ Փոքր Ասիայի կենտրոնական մասում:

[6] Աֆարդախս (Աֆրդխս) լեռ - Եփրատի ակունքը գտնվում է Մաղկավետ լեռների (այժմ՝ Դումուլուդաղ) հարավային լանջերում: